# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**ՈՐՈՇՈՒՄ N 96-Ա**
**25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.**

**ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՋԱՐԱՆՑԱՆ ՄԱՅՐՈՒՂՈՒ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻՑ 0.26757 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի ապրիլի 20-ի թիվ 723-Ն, Կապանի համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 23-ի թիվ 8-Ն որոշումների և հաշվի առնելով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության 10 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Կապան համայնքի վարչական տարածքում, համայնքային սեփականություն հանդիսացող, համայնքի Կապան քաղաքի Քաջարանցյան մայրուղու հարևանությամբ գտնվող գյուղատնտեսական նշանակության վարելահողերից 0.26757 հա հողամասը /ծածկագիր 01-009-0030-0022/, գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով, 25 /քսանհինգ/ տարի ժամկետով մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել, մեկնարկային վարձավճար սահմանելով տարեկան 60210,0 (վաթսուն հազար երկու հարյուր տասը) դրամ:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Կողմ ( 10 )՝**

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ
ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ
ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ
ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

**Դեմ ( 0 )**

**Ձեռնպահ ( 0 )**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*2018 թ սեպտեմբերի 26*
*ք. Կապան*